

1.2.3. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2000թ. հունվարին հանրապետությունում *բնակչության միջոցների հաշվին* շահագործման են հանձնվել 3632 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 17 նոր բնակելի շենքեր կամ 1999թ. հունվարին գործարկված մակերեսի 61,8%-ը, մասնավորապես. Արտաշատի տարածաշրջանում՝ 1000 քառ.մ (5), Արթիկի՝ 542 (2), Իջևանի՝ 300 (3), ք.Գյումրիում՝ 384 (2), ք.Վանաձորում՝ 206 (1), ք.Երևանում՝ 1200քառ.մ (4):

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: 2000թ. հունվարին հանրապետությունում իրականացվել է 1136,8 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 595,5 մլն. դրամի: Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 1037,9 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 528,7 մլն.դրամ:

Հանրապետությունում 2000թ. հունվարին իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

Ֆինանսավորման աղբյուրները	Իրականացված կապիտալ շինարարությունը, մլն. դրամ (փաստացի գներով)	Տոկոսներով	
		ընդհանուրի նկատմամբ	2000թ. հունվարի 1999թ. հունվարի նկատմամբ (համադրելի գներով)
Իրականացված կապիտալ շինարարությունը, ընդամենը	1136,8	100	56,5
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>			
պետական բյուջեի	23,4	2,0	8,2
համայնքների միջոցների	5,8	0,5	52,3
Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի վարկի	6,6	0,6	14,8
Համաշխարհային բանկի վարկի	273,6	24,1	53,2
Համաշխարհային բանկի գրանտի միջոցների	22,1	1,9	13անգամ և ավելի
մարդասիրական օգնության միջոցների	54,2	4,8	40,3
<i>դրանից՝</i>			
ՄԱԿ-ի միջոցների	11,9	1,1	27,8
այլ մարդասիրական օգնության միջոցների	42,3	3,7	46,5
ձեռնարկությունների միջոցների	224,9	19,8	2 անգամ և ավելի
բնակչության միջոցների	526,2	46,3	68,5

2000թ. հունվարին *պետական բյուջեի* միջոցների հաշվին արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել է 23,4 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալը կազմել է 5,8 մլն. դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 0,1 մլն. դրամ:

Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին արտադրական նշանակության օբյեկտների կապիտալ շինարարության վրա իրականացվել է 6,6 մլն. դրամի աշխատանքներ:

Համաշխարհային բանկի տրամադրված վարկի հաշվին 2000թ. հունվարին իրականացվել է 273,6 մլն. դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 253,7 մլն. դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 253,1 և 233,2 մլն. դրամ:

Համաշխարհային բանկի կողմից տրամադրված *գրանտի* հաշվին “Զրային հատվածի զարգացման” ծրագրի նախապատրաստական աշխատանքների համար իրականացվել են 22,1 մլն. դրամի արտադրական նշանակության կապիտալ ներդրումներ:

Մարդասիրական օգնության միջոցների հաշվին 2000թ. հունվարին իրականացվել է 54,2 մլն. դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով 30,2 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 49,2 և 26,4 մլն. դրամ, դրանից՝

1. Ի Բ Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

♦ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի միջոցների հաշվին սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության համար իրականացվել են 11,9 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Ձեռնարկությունների և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվել է 224,9 մլն. դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 204,6 մլն. դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 203,5 և 193,1 մլն. դրամ:

Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել է 526,2 մլն. դրամ, այդ թվում անհատական բնակելի շենքերի գծով՝ 450,4 մլն. դրամ շինարարական աշխատանքներ, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 75,8:

2000թ. հունվարին իրականացված կապիտալ շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի

(մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով	
	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	1136,8	1037,9	100	100
<i>այդ թվում՝</i>				
արդյունաբերություն	43,7	29,0	3,9	2,8
գյուղատնտեսություն	307,0	264,1	27,0	25,5
տրանսպորտ և կապ	190,0	183,1	16,7	17,6
առևտուր	54,8	52,5	4,8	5,1
բնակարանային տնտեսություն	450,4	450,4	39,6	43,4
կոմունալ տնտեսություն	32,0	22,1	2,8	2,1
առողջապահություն	17,8	16,6	1,6	1,6
կրթություն	20,1	20,1	1,8	1,9
տնտեսության այլ ճյուղեր	21,0	-	1,8	-

Շինարարությունն աղետի գոտում: 2000թ. հունվարին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 1432 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 8 նոր բնակելի շենքեր կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 39,4 %-ը:

Հանրապետության աղետի գոտում 2000թ. հունվարին բնակելի շենքերի, սոցիալ-մշակութային և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման վրա ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 234,2 մլն. դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 20,6%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 23,3 մլն. դրամ (3,9 %):

2000թ. հունվարին հանրապետության աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

(մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն	
	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Կապիտալ շինարարություն, ընդամենը	234,2	232,7
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>		
պետական բյուջեի	2,7	2,7
համայնքերի միջոցների	4,4	4,4
Համաշխարհային բանկի վարկի	29,9	29,9
մարդասիրական օգնության միջոցների	18,4	17,2
<i>դրանից՝</i>		
ՄԱԿ-ի միջոցների	11,9	10,7
այլ մարդասիրական օգնության միջոցների	6,5	6,5
ձեռնարկությունների միջոցների	1,0	1,0
բնակչության միջոցների	177,8	177,5